

Գործնական քայլ աղբահանության գործընթացը արդիականացնելու համար

Մարտի 10-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության և COWI A/S միջազգային խորհրդատվական ընկերության միջև կնքվել է “Կոտայքի կոշտ թափոնների կառավարում. շրջակա միջավայրի և սոցիալական ուսումնասիրություն” լրամշակված խորհրդատվական պայմանագիրը, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության, և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին և փետրվարի 2-ին կնքված “Հայաստան. Կոտայքի կոշտ թափոնների կառավարում, բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություն” լրամշակված դրամաշնորհի համաձայնագրի մաս: Այն վավերացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2011 թվականի փետրվարի 21-ի թիվ ՆՀ-33-Ն հրամանագրով:

Դրամաշնորհային ծրագրի շնորհիվ նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզում և Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում թափոնների կառավարման և գործող աղբավայրերի առնչությամբ շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների գնահատում, նոր աղբավայրի ստեղծման և հների փակման կամ վերաբեռնման կայանների վերափոխման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: